



Ազդարարության Trumpet's Sound **փող**

51-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2020





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Խովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

COVID-19. օրհնություն՝ւն, թե՞ անեծքՀովիվ՝ Հրաչ Գույունյան

Թե՛ գիտես, ասա՛Հովիվ՝ Գառնիկ Աբրեյան

Սաղմոս 1.Դոն Սթորմըր

Մենք չենք վախենաԴոկտ. Չեյլով Բասսարա

Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (1) ՉՄԲԸ պանորամա

Ոսկե կանոնը (2).Բաֆֆի Չափարյան

Ծնորհով փրկված մեղավորներ.Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Թիթեոնիկի առակըՔաղված

Բացում ես ձեռքդ, ու լիացնում եսՎեր.՝ Հապիպ Ալաճաճի

Տիղմ, վեմ, աղաղակ, երգՎարդան Սարգիսյան

COVID-19. օրհնություն, թե՞ անեծք

**«Եվ քո առջևից գնացողը նույն Ինքը՝ ՏԵՐՆ է,
Նա քեզ հետ է լինելու, Նա քեզ չի թողնի և քեզ
չի լքի, մի՛ վախենա, մի՛ զարհուրիր» (Բ Օր. 31:8):**

Մեր կյանքում պատմության շատ հետաքրքիր ժամանակներով ենք անցնում: Արդյոք այս ամենը պարզապես պատահա՞ր է: Ի՞նչ կապ ունի Աստված COVID-19-ի հետ:

Եթե մեր Աստվածը Արարիչն է, Նա ամեն ինչի հետ կապ ունի: Նա Տեր չէ, եթե ամեն ինչի Տերը չէ: Եթե Նա բոլորի Աստվածն է, ապա ինչո՞ւ այսքան շատ մահեր ու վախեր կան աշխարհում:

Այս հարցին կարող ենք երկու ձևով պատասխանել.

1. Աստվածաշունչը շատ հստակ ասում է, որ վերջին ժամանակներում շատ աղետներ պիտի լինեն:

Մատթ. 24:6-9-ում կարդում ենք. «Եվ դուք լսելու եք պատերազմներ և պատերազմների լուրեր. Ջգո՛ւյշ եղեք, որ չտագնապեք, որովհետև այս բոլոր բաները պիտի լինեն, բայց դեռ վերջը չէ: Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ. և սովեր ու համաճարակներ պիտի լինեն, և տարբեր տեղերում՝ երկրաշարժեր: Բայց այս բոլորը՝ ցավերի սկիզբն է: Այն ժամանակ ձեզ նեղության պիտի մատնեն ու պիտի սպանեն, և Իմ անվան համար բոլոր ազգերին ատելի պիտի լինեք»:

Այս ամենը պիտի պատահի, որպեսզի գիտակցենք ճշմարտությունը, որպեսզի Իր մոտ գանք ու հասկանանք, որ այն ամենը, ինչ գրված է, պետք է կատարվի:

Նոյի ժամանակներում ջրհեղեղ եղավ, մարդկանց մեղքերի պատճառով Սողոմն ու Գոմորը կործանվեցին: Շատերը նայում են այսօրվա իրավիճակին ու կարծում, թե Աստված պատժում է իրենց: Ո՛չ. Աստված նախազգուշացնում է մարդկությանը գալիք բաների մասին: Այո՛, պատիժը գալու է և փախչելու տեղ չի գտնվելու:

2. Մեղքի վարձքը մահ է:

Բոլոր ժողովուրդները, ցեղերը և ազգերը գիտեն, թե ինչ է մեղքը: Բոլորը հեռացած են Աստծուց: Կրոնի մասին խոսելը արգելված է, հասարակական հավաքույթների ժամանակ աղոթելը արգելված է, Աստվածաշունչ կարդալը արգելված է, մանուկներին Քրիստոսի մասին սովորեցնելը արգելված է, մեղքի և մեղավոր բնության մասին խոսելը արգելված է: Աստծո կամ Տեր Հիսուսի հանդեպ հարգանք չկա: Ինչպե՞ս կզգայիք, եթե մարդիկ մերժեին ձեզ ու հայիոյեին ձեր անվանը:

Բ Տիմ. 3:1-5-ում ասվում է. «Այս էլ իմացիր, որ վերջին օրերում չար ժամանակներ պիտի գան: Որովհետև մարդիկ պիտի լինեն ինքնասեր, արծաթասեր, ամբարտաժան, հպարտ, հայիոյիչ, ծնողներին անհնազանդ, ապերախտ, անսուրբ. առանց բնական զգացումի, անհաշտ, բանասարկու, անժուժկալ, դաժան, բարուն թշնամի, մատնիչ, հանդուգն, գռռոզ, ավելի հաճույքներ սիրող, քան՝ աստվածասեր, աստվածապաշտության կերպարանքն ունենալով, բայց դրանում եղող զորությունն ուրանալով: Այդպիսիներից ե՛տ քաշվիր»:

Աստվածաշունչը շատ լավ նկարագրում է մեր վիճակը և թե որքան ենք հեռացել Աստծուց: Ուրեմն ի՞նչ ասենք: Արդյոք այս վիրուսը անե՞ծք է: Ո՛չ. Աստված ողորմած ու սիրող է: Սա նախազգուշացում է՝ օգնելու մեզ գիտակցելու մեր կարիքը, նախազգուշացում՝ օգնելու մեզ ապաշխարության գալու: Շնորհքի դուռը լայն բացված է բոլոր նրանց համար, ովքեր Աստծուն են դառնում՝ Նրա մեջ ապաստան գտնելու:

Դուք կարող եք այսօր Քրիստոսով խաղաղություն գտնել: Բոլոր նրանք, ովքեր ապաշխարությամբ գան Հիսուսի մոտ, Աստծո զավակներ կդառնան:

Այո՛, COVID-19-ը անե՞ծք է մեղավորների համար, բայց օրհնություն բոլոր նրանց համար, ովքեր ապաշխարությամբ Նրա մոտ են գալիս: Թող Տերը օգնի բոլորիս, որ հավատքով մոտենանք Իրեն:

Հ. Գ.

Թե գիտես, ասա՛

Գրագե՛տ եղբայր, որ ասում ես, թե
Աստծուն մարդիկ են հորինել խավար,
Ի՞նչ Աստված, Հոգի կամ Ի՞նչ սատանա,
Գլխավորը ուսումն է, որ կա:

Թե Աստված չկա, ո՞վ ծրագրեց
Օվկիանոս ու ծով. Եվրոպա, Ասիա
Հատակագիծը ո՞վ, ինչպե՞ս գծեց,
Ո՞վ իրագործեց: Թե գիտես, ասա՛:

Թե Աստված չկա, լուսին ու արև՝
Որպես անվախճան լույսերի կաթսա,
Ո՞նց չեն վերջանում և ո՞նց չեն մարել,
Որտեղի՞ց սրանք: Թե գիտես, ասա՛:

Թե Աստված չկա, ինքդ քեզ հարցրո՛ւ՝
Ո՞նց մանկությունից ծերության հասա,
Ոչինչ դու քեզնից, եղբայր, մի՛ թաքցրու,
Այդ ինչպե՞ս եղավ: Թե գիտես, ասա՛:

Թե Աստված չկա, հանճարը ի՞նչ է:
Բանականություն. արդյոք ի՞նչ է սա:
Ուսումն առանց խիղճ շատ և շատ քիչ է:
Իսկ խիղճը ի՞նչ է: Թե գիտես, ասա՛:

Թե Աստված չկա, ո՞նց են կշտանում
Թռչուններ, ձկներ մարդկանց հավասար:

Ո՞վ է հոգ տանում, ո՞վ է վշտանում:

Նրա անունը թե գիտես, ասա՛:

Ո՞վ է հնարում պատերազմները,

Տգետներ՞ըր, թե՞ ուսյալները. ասա՛

Պատճառը. պիղծ են մեր երազները,

Ինչո՞ւ է այդպես: Թե գիտես, ասա՛:

Եղբայրը եղբորը դատի է տալիս.

Չար սատանայի ապացույցն է սա:

«Ես եմ լոկ ճիշտը»,- ճշում է, լավիս:

Ինչո՞ւ չի ներում: Թե գիտես, ասա՛:

Չավակներն իրենց ծեր ծնողներից,

Ջզվում են, հարցնում, թե ի՞նչ հոտ է սա,

Ոչնչով լավ չեն չար ոսխներից,

Սա ի՞նչ կրակ է: Թե գիտես, ասա՛:

Կա գիշեր, հետո կա և լուսաբաց,

Կա ամառ, ձմեռ, կա հարս ու փեսա,

Կարգ ու կանոն կա, աչքերդ լայն բաց,

Որտեղի՞ց է այն: Թե գիտես, ասա՛:

Օ՛, եղբայր անգին, քո պատկերը տե՛ս.

Ո՞ւմ օրինակն ես, գիտե՞ս արդյոք սա:

Որ Աստված չկա, որ Նրանը չես,

Ապա ո՞ւմն ես: Թե գիտես, ասա՛:

Հովիվ՝ Գառնիկ Աբրեյան

Սաղմոս 1

(Կարդացե՛ք 1-ին սաղմոսը)

Առաջին սաղմոսը հակադրում է «երանելի» մարդուն այն մարդու հետ, ով դաստաստանի ժամանակ Աստծո առջև չի կարողանալու կանգնել:

Աստվածավախ մարդը

Սաղմոսը սկսվում է «երանելի» բառով. «Երանելի է այն մարդը, որ անաստվածների խորհրդով չի ընթանում»: Երկրորդ սաղմոսը վերջանում է ևս մեկ երանելիով. «Երանի՜ բոլոր նրանք, ովքեր իրենց հույսը Նրա վրա են դրել»:

Աստվածավախ մարդու համար երեք բան ճշմարիտ է.

- Նա անաստվածների խորհրդով չի ընթանում:
- Մեղավորների ճանապարհում չի կանգնում:
- Հեգնողների աթոռին չի նստում:

Անաստվածի ցանցն ընկած մարդու ճանապարհներում անկում ենք նկատում: Ամբարիշտների ծուղակն ընկնելու համար անձը նախ նրանց հետ ճանապարհ է ընկնում, հետո նրանց ընկերության մեջ է մնում և վերջապես նստում է նրանց հետ: Նկատում ենք նաև, որ սաղմոսերգուի նկարագրած մարդկանց բնավորությունը ավելի է վատթարանում: Ամբարիշտը ինքն իրեն լավ մարդ է համարում, ավելի լավը, քան մեղավորը, մեղավորն էլ պնդում է, թե ինքն ավելի լավն է, քան հեգնողը. ինքը գուցե սխալներ թույլ տա, բայց ուրիշի հավատքը չի ծաղրի: Սակայն Աստծո աչքերի առջև բոլորը մեղավոր են: Աստծո հանդեպ երկյուղ չունեցող անաստված մարդու դաստաստանի մասին կարդում ենք 6-րդ համարում:

Աստվածավախ մարդը նկարագրված է որպես մեկը, ում հաճությունը Տիրոջ օրենքի մեջ է: Սա նշանակում է, որ նա գիտի Աստծո սուրբ չափանիշները և ձգտում է հնազանդվել Նրա կամքին: Հետևաբար շարունակ խորհրդածում է Աստծո Խոսքի ճշմարտությունների

շուրջ՝ թույլ տալով, որ պատգամը խորը արմատ դնի սրտում:

Աստվածավախ մարդը Աստծո համար պտղաբեր կյանքով է ապրում: Նա ջրի ճանապարհին տնկված ծառի պես է: Երկու բան ճշմարիտ է խոնավության կամ ջրի աղբյուրի մոտ տնկված ծառի համար. այն պտուղ է բերում, և նրա տերևները չեն չորանում: Այսպիսի անձը ինչ որ անի, կհաջողի: Այսպիսի մարդիկ իրենց քրիստոնեական կյանքում հոգևոր հարցերի նկատմամբ կենսունակություն են ցուցաբերում, քանի որ նրանք շարունակ խորհրդածում են Տիրոջ Խոսքի շուրջ. նրանք իրենց Տիրոջ հավատարիմ ու արգասաբեր ծառաներն են:

Մենք գիտենք, որ միայն մեկ անձ կա, որի մասին այս նկարագրությունը միանգամայն ճշմարիտ է: Մեր Տեր Հիսուսը անաստվածների խորհրդով չընթացավ, ոչ էլ մեղավորների ճանապարհում կանգնեց, նրանց անիրավ գործողություններին հավանություն չտվեց: Նա չըստեց հեգնողների հետ, այսինքն՝ չմիացավ նրանց ծաղրանքին: Այնուամենայնիվ, Նա մտավ լքված մաքսավորների և մարմնավաճառների տները՝ նրանց փրկության պատգամը տալու: Նա նրանց ցույց տվեց Աստծո սերը և Աստծո խաղաղությունը ունենալու միջոցը: Այսպիսով Նա Իր հետևորդներին օրինակ թողեց:

Անաստվածը

Սաղմոսերգուն անմիջապես ցույց է տալիս, թե որքան տարբեր են անաստվածները: Նա մեկ կարճ արտահայտությամբ ամփոփում է՝ ասելով. «Այսպես չեն...»: Նրանք հաստատում չեն: Աստվածավախ մարդը ջրի ճանապարհին տնկված ծառի պես է, իսկ անաստվածը՝ հարդափոշու պես, որին հովն է քշում: Նա կայուն չէ և մնայուն արժեքներ չունի: «Այսպես չեն...» արտահայտությունը հակադրում է անաստված մարդու կյանքը աստվածավախ մարդու կյանքին: Նրանք տարբերվում են իրենց հետաքրքրություններով ու կյանքի պտղաբերությամբ:

Ապագայի դատաստանի մասին մտածելով՝ սաղմոսերգուն անաստված մարդկանց համար բարօրություն չի կանխատեսում: Դատաստանի ժամանակ նա չի կարողանալու ինքն իրեն պաշտպանել. մե-

ղավորները չեն կարողանալու կանգնել արդարների ժողովում: Ապագայում մարդիկ կլինեն, ովքեր ասելու են. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով այս կամ այն բանը արեցինք», բայց Տերը նրանց պատասխանելու է, թե իրենց երբեք չի ճանաչել: Նրանք մատնվելու են հավիտենական պատժի: Հիմա է ապաշխարությամբ ու հավատքով Տիրոջը դիմելու ժամանակը: Եթե այդպես անենք, կարող ենք վստահ լինել, որ մի օր կլինենք արդարների ժողովում:

Աստծո ամենագիտությունը հռչակվելու է: Նա գիտի թե՛ արդարների և թե՛ անաստվածների ճամփան: Նա գիտի անաստված մարդկանց ճանապարհի վերջը: Նրանք իրենց գործերի պատճառով հավիտենապես կորչելու են: Սա չի նշանակում, որ նրանք գոյություն չեն ունենալու, այլ շարունակելու են իրենց գոյությունը Աստծո դասաստանի տակ:

Սիրելի՛ բարեկամ, որտե՞ղ ես անցկացնելու քո հավիտենականությունը: Այսօր կարող ես ապաշխարել ու հավատալ: Վաղը միգուցե ուշ լինի:

Դոն Սթորմըր



Կարևոր հայտարարություն

Տնտեսական իրավիճակից ելնելով՝ տպագիր ամսագիրը գուցե չկարողանաք ստանալ, քանի որ նվազեցնում ենք թերթի տպաքանակը: Հույս ունենք, որ ապագայում իրավիճակը կփոխվի:

Խնդրում ենք աղոթել մեզ հետ, որ Տերը հայթայթի մեր ֆինանսական կարիքները ծառայությունը շարունակելու համար: Կարող եք առցանց կարդալ և ներբեռնել թերթը հետևյալ հղումով՝ <http://www.acmaust.org/help/trumpet-sound-magazine/>:

*«Ազդարարության փող»-ի
խմբագրական հանձնախումբ*

Մենք չենք վախենա

**«Դրա համար մենք չենք վախենալու,
թեև աշխարհն անցնի...» (Սաղմոս 46:2)**

Աշխարհը սրընթաց կերպով փոփոխվում է: Այսօրվա աշխարհը խիստ տարբեր է մեր մանկության աշխարհից: Այս աշխարհը շատ է փոխվել Կորիսի որդիների ժամանակներից, ում միջոցով Աստված գրեց 46-րդ Սաղմոսը: Այս աշխարհը տարբերվում է այն ժամանակներից, երբ Տեր Հիսուսը քայլում էր Գալիլիայի ու Հրեաստանի գյուղերի ու քաղաքների փողոցներով: Այս աշխարհը տարբերվում է Գործք Առաքելոցում նկարագրված Պողոս առաքյալի միսիոներական ճամփորդությունների ժամանակներից: Այս աշխարհը տարբերվում է 16-րդ դարի Եվրոպական ռեֆորմացիայի ժամանակներից, իր սերնդով տարբերվում է մինչև այժմ եղած սերունդներից: Ունայնության այս սերունդը ճշմարիտ խաղաղության ու հաստատման կարիք ունի:

Ամրապինդ էշ

Ինչպե՞ս կզգայիք, եթե ինչ-որ մեկը ձեզ ասեր, որ դուք իրեն ավանակ եք հիշեցնում: Հենց այդպես եղավ Հակոբի որդիներից մեկի հետ: Նրա անունն Իսաքար էր: Անունը նշանակում է «վարձք», սակայն հայրը որդիներին օրհնելիս ասաց. «Իսաքարը մի ամրապինդ էշ է, պառկում է զոմերի մեջտեղը. և տեսավ որ հանգստությունը լավ է, և երկիրը՝ որ գեղեցիկ է. իր ուսը ծռեց բռն կրելու, և հարկատու ծառա եղավ» (Ծննդ. 49:14-15):

Կարմիր որդ

«Եվ Աբիմելեքից հետո Իսրայելին ազատելու համար Իսաքարեան Դովդայի որդիի Փուայի որդի Թովդան վեր կացավ Իսրայելը պաշտպանելու»: Նա Եփրեմի սարումը Սամիրի մեջ էր բնակվում (Դատ. 10:1): «Թովդա» նշանակում է կարմիր որդ: Աստվածաշնչում երկու մարդ կա այս անունով՝ Իսաքարի ավագ որդին (Ծննդ. 46:13) և Իսաքարի տոհմից մի դատավոր, ով Իսրայելում դատավորություն արեց 23 տարի:

Նրանք հասկանում էին՝ ինչ ժամանակներում են ապրում:

«Եվ Իսաաքարի որդիներից, որ ժամանակի գիտությունը ունեին և հասկանում էին թե Իսրայելը ինչ պետք է անի, նրանց երկու հարյուր գլխավորները...» (Ա Մնաց. 12:32): Իսաաքարի որդիները մարդիկ էին, ովքեր գիտեին՝ ինչ ժամանակներ էին: Նրանք հասկանում էին՝ ինչ ժամանակներում են ապրում:

Ի՞նչն է ավելի կարևոր, քան մեր ժամանակները հասկանալը:

Մինչ մեր ժամանակներում օրհնություն դառնալը և մեր ապրած աշխարհում փոփոխություն բերելը՝ մենք պետք է հասկանանք Նրան և աշխարհը փոխելու Նրա մեթոդները, ով ժամանակի Տերն է, և Ինքն Աստված է:

1. Հասկանալ Աստծուն (Նա չի փոխվում),
2. Հասկանալ Աստծո Ավետարանը (այն չի փոխվում),
3. Հասկանալ ժամանակները (դրանք հարափոփոխ են), երբ Աստծո Ավետարանը փոխում է աշխարհը:

Մենք ապրում ենք հարափոփոխ աշխարհում, սակայն Աստծո Ավետարանը մնում է Աստծո միակ անփոփոխ գործությունը, որ ի գործ է փոխելու աշխարհն այնպես, ինչպես Աստված է կամենում:

Աշխարհի փոփոխությունները մեզ չեն վախեցնի, քանզի Աստված վերահսկում է:

Աստված հատուկ ծրագիր ու նպատակ ունի այս աշխարհի համար (Հոր 23:13, Եփես. 1:8-12):

- Աստված միշտ վերահսկում է ամեն բան և անընդհատ գործում է Իր ծրագիրն իրականացնելու համար (Ամբ. 1:1-11, Եսայի 10:5-6):
- Աստված Իր ծրագիրն իրականացնելիս վերահսկում և օգտագործում է ամեն ինչ և ամենքին, անգամ սատանային (Եսայի 10:7-11, Սաղ. 76:10):

Աստծո Ավետարանն աշխարհը փոխելու գործություն ունի:

Այս աշխարհը փոխելու գործում քրիստոնյաներն Աստծո ծրագրի

մի մասն են: Աստված կամենում է օգտագործել Իր «Էշերին» ու Իր «կարմիր որդերին»՝ Ավետարանի գործությամբ այս աշխարհը փոխելու համար:

Դատավոր Թովդան՝ Դատավորաց գրքից, 23 տարի շարունակ խաղաղություն ապահովեց երկրում:

Աստծո Ավետարանը բոլոր ժամանակներում աշխարհին խաղաղություն բերելու միակ ուղին է, նույնիսկ մեր հետմոդեռնիստական ժամանակներում:

Մենք Իսաքարի որդիների պես ենք՝ «Էշեր» և «կարմիր որդեր», որ խաղաղության Ավետարանն ենք բերում աշխարհին: Հոբի գրքում, երբ Բաղդատը մարդուն նմանեցնում է մի որդի (Հոբ 25:6), միտում կա: Գազանը գոնե որոշակի հասկացողություն ունի, հապա ո՞րդը:

Ավելի լավ է լինել «Աստծո էշեր» և «Աստծո կարմիր որդեր» և աշխարհին խաղաղություն և ուրախություն բերել, քան լինել այս աշխարհի թագավորներ, նախագահներ ու տիրակալներ, ովքեր աշխարհին պատերազմներ ու արհավիրք են բերում:

Մեզ հարկավոր է հասկանալ Աստծուն, Նրա մեթոդները և ժամանակները: Առանց այս ամենի՝ կարող ենք շատ բան անել, սակայն չենք կարող դեպի լավը փոխել այս աշխարհը:

Աստված կամենում է Իր փառքի համար օգտագործել Իր զավակներին:

Աստված չի կամենում, որ մենք վախենանք:

Մենք վախենալու պատճառ չունենք:

Մենք Աստծո գործիքները լինելու արտոնությունն ունենք:

Այս աշխարհը կարելի է փոխել «Աստծո էշերի» և «Աստծո կարմիր որդերի» միջոցով: Աստված իր սքանչելի շնորհով այսօր օգտագործում է էշերի ու որդերի: Խնդիրն այն է, որ երբեմն մենք պատրաստ չենք Նրա էշերն ու Նրա որդերը լինելու: Չէ՞ որ Տեր Հիուսին՝ խաղաղության արքայազնին, Երուսաղեմ բերողն էլ էր: Մենք պետք է լինենք էշեր, որ աշխարհին Տեր Հիուսի պատգամն են բերում: Այս պատգամը փոխում է աշխարհը:

Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (1)

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնչորս սերտոդություններում հիմնականում ուսումնասիրեցինք Աստծո՝ շնորհի վրա հիմնված փոխհարաբերությունը մարդկության հետ: Այս և հետագա սերտոդություններում կուսումնասիրենք Աստծո դատաստանները, որոնք թափվելու են երկրի վրա: Դրանից հետո Տեր Հիսուսը հազար տարի իշխելու է երկրի վրա:

Նախորդ երկու դասընթացներում հակիրճ ուսումնասիրեցինք քրիստոնեական եկեղեցու պատմությունը: Սա ունենալով մեր մըտքում՝ պետք է կարողանանք գնահատել Հայտնության գրքի 2-րդ և 3-րդ գլուխներում Տեր Հիսուսի՝ յոթ եկեղեցիներին սովորեցրած ճշմարտությունները: Իրականում Նա 7 նամակների միջոցով մեզ տվել է եկեղեցիների մասին ամփոփ մարգարեություններ, և մենք կտեսնենք, թե ինչպես են դրանք կատարվում: Իհարկե, Տեր Հիսուսը այդ նամակները հղում էր Հովհաննեսի օրերում գործող 7 եկեղեցիներին, որպեսզի նրանց քաջալերեր, գովեր, ուղղեր և զգուշացներ, սակայն այսօր մենք պետք է կիրառենք դրանց բովանդակությունը մեր կյանքում:

Հայտնության գիրքը (կամ Հիսուս Քրիստոսի հայտնությունը) կուսումնասիրենք այս և հաջորդ սերտոդություններում: Ինչպես Ծննդոցն է համարվում սկզբի գիրքը, այնպես էլ Հայտնությունը համարվում է վերջին բաների գիրքը: Ձեզ ենք ներկայացնում այս գրքերի միջև եղած որոշ օգտակար համեմատություններ:

Ծննդոց	Հայտնություն
Երկնքի և երկրի արարումը:	Նոր երկինք և նոր երկիր:
Եդեմի պարտեզը:	Աստծո դրախտը:
Ադամը պետք է իշխի երկրի վրա:	Տեր Հիսուսը կիշխի նոր ստեղծագործության վրա:

Իսահակի փոխարեն խոյր գոհաբերվեց: Սատանան խաբում է Եվային, և մեղքը մտնում է աշխարհ: Բաբելոնի սկիզբը:	Տեր Հիսուսը գահին նստած Գառն է: Սատանան նետվում է Կրակե լիճը: Բաբելոնի կործանումը:
---	--

Հայտնության գիրքը հիմնականում բաժանվում է երեք մասի՝ հիմնըված Հայտ. 1:19-ում Տեր Հիսուսի՝ Հովհաննես առաքյալին հանձնարարած խոսքի վրա. «Գրի՛ր ինչ որ տեսնում ես՝ այն, որ կա և այն, որ հետո է լինելու»:

Եկե՛ք ավելի մանրամասն նկարագրենք երեք բաժինները:

1. «Ինչ որ տեսնում ես»

Հովհաննեսն Աստծո Խոսքի և Հիսուս Քրիստոսի վկայության համար աքսորվեց Պատմոս կղզի (Հայտ. 1:9): Այդ ժամանակ Տերը հայտնվեց նրան, և Հովհաննեսը գրեց այն, ինչ տեսավ ու լսեց Տիրոջ հետ այդ հանդիպման ժամանակ (Հայտ. 1:10-18):

2. «Այն, որ կա»

Այս դեպքը տեղի է ունեցել Եկեղեցու հիմնադրումից շուրջ 60 տարի անց: Հովհաննեսն այդ շրջանում կապ ուներ հարյուրավոր տեղական եկեղեցիների հետ: Նա պետք է գրեր «այն, ինչ կար», այսինքն՝ ուղերձ յոթ ընտրված եկեղեցիներին, և նկարագրեր նրանց վիճակը: Միևնույն ժամանակ նա պետք է տար եկեղեցական շրջանի համայնապատկերային տեսարան՝ սկսած Պենտեկոստեի օրից (Գործք 2) մինչև Եկեղեցու հափշտակությունը (Ա Թես. 4:15-17):

3. «Այն, որ հետո է լինելու»

Սա վերաբերում է այն ամենին, ինչ տեղի է ունենալու Եկեղեցու ժամանակաշրջանի ավարտից հետո: 4:1-ում Հովհաննեսը երկու անգամ օգտագործում է «սրանից հետո» բանալի արտահայտությունը: Աստվածաշնչի բազմաթիվ ուսուցիչների հետ համաձայն ենք, որ այս արտահայտությունը նշանակում է «Եկեղեցու ժամանակաշրջանի ավարտից հետո»:

ջանից հետո»։ Հետևաբար Հայտ. 4-րդ գլխի սկզբից ունենք Եկեղեցու ժամանակաշրջանից հետո կատարվելիք դեպքերի մարգարեությունները։ Նշենք, որ «սրանից հետո» արտահայտությունը յոթ անգամ կրկնվում է Հայտնության գրքում (4:1 (2 անգամ), 7:1, 7:9, 15:5, 18:1 և 19:1-ում)։

2. ՏԵՐԸ ՀԱՅՏՆՎՈՒՄ Է ՀՈՎՀԱՆՆԵՍԻՆ (1:1-20)

Հովհաննեսը Դոմիցիանոսի (81-96 մ.թ.) կողմից աքսորվել էր Պատմոս կղզի, որը փոքր քարքարոտ կղզի էր մոտ 40 կմ շառավիղով։ Այն գտնվում էր Կրետեից շուրջ 160 կմ դեպի հյուսիս, Եփեսոսից շուրջ 100 կմ դեպի հարավ-արևմուտք, որտեղ Հովհաննեսը երկար տարիներ էր անցկացրել։ Աքսորի տարիներին նա կտրվել էր բոլոր քրիստոնյաներից, որոնց հավատարմորեն ծառայել էր, արժևորել հաղորդակցությունը նրանց հետ։ Պատմոս կղզում նա բոլորովին մենակ էր։

Դա Տիրոջ օրն էր, այսինքն՝ կիրակին, և Հովհաննեսը Հոգու մեջ էր՝ գերբնական փորձառության (ավելի ուշ նա տեղափոխվեց անմիջապես Երկինք. Հայտ. 4:1-2, հմմտ. Բ Կորնթ. 12:2)։ Այդ ժամանակ Տեր Հիսուսը հայտնվեց նրան ու տվեց յոթ ոսկե աշտանակները, որոնք ներկայացնում են Ասիայի յոթ եկեղեցիները։

Հովհաննեսը նախ իր ետևից մի գորեղ ձայն լսեց՝ փողի ձայնի պես, որը հրահանգում էր իրեն գրել այն, ինչ տեսնում է, և ուղարկել յոթ եկեղեցիներին (Հայտ. 1:10-11)։ Այնուհետև նա շրջվեց ու տեսավ յոթ ոսկե աշտանակները և դրանց մեջտեղում՝ մեկին, որ նման էր Մարդու Որդուն։ Կասկած չկա, թե ով է Մարդու Որդին. Նա Ալֆան և Օմեգան է, Առաջինը ու Վերջինը, որ մեռած էր, և ահա՛, կենդանի է հավիտյանս հավիտենից (Հայտ. 1:17-18)։ Նրա երևույթից կարելի է ենթադրել, որ Նա գալիս է որպես Մեծ քահանայապետ ու Դատավոր, որպեսզի քննի եկեղեցիները ու դատի նրանց։

Հովհաննեսը տեսել էր հարուցյալ Տիրոջը, տեսել էր Նրան երկինք համբառնալիս։ Հիմա՝ վաթսուն տարի անց, Տերը նորից երևաց Հովհաննեսին, բայց շատ տարբեր տեսքով։ Հովհաննեսը, ով Հիսուսի կրծքովն էր ընկել (Հովհ. 21:20), այժմ մեռելի պես ընկել էր Նրա

ոտքերի առաջ (Հայտ. 1:17): Որքա՛ն հանդարտություն ու խաղաղություն պարգևեց Տիրոջ՝ Հովհաննեսի վրա աջ ձեռքը դնելով նրան «Մի՛ վախեցիր» ասելը:

Այստեղ մենք պետք է նշենք, որ Հայտնության գրքում կա չորս խորհուրդ (Հայտ. 1:20, 10:7, 17:5, 7) և շատ խորհրդանիշներ: Խորհուրդը նախկինում թաքնված մի բան է, որն այժմ հայտնված է, իսկ խորհրդանիշը սովորաբար բացատրվում է: Հայտ. 1:20-ում յոթ աստղերի և յոթ աշտանակների խորհուրդը հայտնվում է. աստղերը եկեղեցիների հրեշտակներն են կամ պատգամաբերները, իսկ աշտանակները եկեղեցիներն են: Շատ աստվածաբաններ համաձայնում են, թե հրեշտակները ներկայացնում են եկեղեցիներում պատասխանատվության դիրք ունեցողներին կամ երեցներին:

Տերը հայտնվել էր Հովհաննեսին, տվել տեսիլքներ ու հստակ ասել, թե ինչ պետք է աներ: Նա պետք է գրեր իր տեսածները յոթ եկեղեցիներին, պետք է գրեր Տիրոջ կողմից թելադրված մամակներ՝ ուղղված յոթ եկեղեցիներին, և այն, ինչ տեղի է ունենալու հետո:

3. ՅՈՒՆԱՍԿՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ (2:1-3:22)

Հովհաննեսը Տիրոջը տեսավ աշտանակների (կամ եկեղեցիների) մեջ: Քանի որ «ամեն ինչ մերկ և բաց է Նրա աչքերի առջև, Ում մենք հաշիվ պիտի տանք», Տերը շատ լավ գիտի, թե ինչ է կատարվում Իր եկեղեցիներում, հետևաբար Հովհաննեսի միջոցով Նա կատարյալ ճշգրտությամբ ցույց էր տալու եկեղեցիների ներսում կատարվածները և ապահովելու էր այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նրանց մխիթարության, քաջալերության, կարգապահության և նախազգուշացման համար: Ասիայում և հարակից շրջաններում շատ այլ եկեղեցիներ կային, սակայն Տերն Իր պատգամը փոխանցելու համար ընտրեց ընդամենը յոթին: Հավանական է, որ մամակ ստացող եկեղեցիները կիսվեցին դրանով այլ եկեղեցիների հետ, ինչպիսիք են՝ Կողոսիայի, Երասալիսի, Անտիոքի և Դրովադայի եկեղեցիները:

(Շարունակելի)

Ոսկե կանոնը (2)

Մատթեոս 7:13-29

Լեռան քարոզում Տերը սովորեցրեց երանելիների, սպանության, շնության, ամուսնալուծության, սուտ վկայության, վրեժի, սիրո, տասանորդի, աղոթքի, ծոմապահության, երկնային գանձերի, Աստծուն մեր կյանքում նախապատվություն տալու, արդար դատաստանի և Ոսկե կանոնի մասին ճշմարտությունները: Լեռան քարոզը եզրափակելով (Մատթ. 7:13-29)՝ Նա Իր լսողներին զգուշացրեց ու մարտահրավեր նետեց Իր ուսուցանածը կիրառելու: Հիսուսը չուզեց, որ մարդիկ պարզապես լսեն ճշմարտությունը, այլ նաև կիրառեն այն իրենց կյանքում: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ ոչ միայն Խոսքը լսողներ լինել, այլև կատարողներ (Հակ. 1:22):

Մինչև Հիսուսի գալը մարդիկ լսել ու սովորել էին կեղծ, մարդաստեղծ կրոնի կամ լայն ճանապարհի մասին: Լեռան վրա Նրա ուսուցանածը տարբերվում էր նրանց սովորածներից: Նա Աստծո կամքի համաձայն սովորեցրեց ճշմարտությունը: Նա սովորեցրեց նեղ ճանապարհի մասին: Հետևաբար քարոզի ավարտին Հիսուսը ժողովրդին մարտահրավեր նետեց՝ վստահ լինելու համար, որ նրանք կսկսեն ապրել այնպես, ինչպես Իրենից սովորեցին, և մի կողմ կդնեն փարիսեցիներից սովորածները:

Այնուամենայնիվ, Հիսուսը չասաց, որ եթե այս բաները անեք, Երկրնքի արքայություն կմտնեք: Ընդհակառակը՝ փարիսեցիները սովորեցնում էին, որ եթե մարդիկ հետևեն իրենց կեղծ ուսմունքներին ու մարդաստեղծ կրոնին, ապա Երկինք կհասնեն: Հիսուսն ասաց, որ նեղ դռնով (Հիսուսն է) մտնելով մարդը կարող է փրկվել (Հովհ. 10:9): Փրկության այլ ձև չկա (Գործք 4:12): Նախ անձը պետք է փրկվի՝ ընդունելով Հիսուսին. սա է նեղ դռնով մտնելը:

Փրկվելուց հետո անձը պետք է իր բոլոր ջանքերը գործադրի Լեռան քարոզի ուսմունքի համաձայն կյանք ապրելու համար, որը նեղ ճամփան է: Ի դեպ, եթե անձը փրկված է, նա այսպիսի կյանք ապրելու կարողությունը ունի: Իրականում՝ գործերը, վարքը և աստվա-

ծահաճո ապրելակերպը փրկության ուղղակի արդյունքն են: Ահա թե ինչու Հիսուսն ասաց, որ նրանց պտուղներից կճանաչեք նրանց (Մատթ. 7:16ա, 20): Ոչ միայն Լեռան քարոզում, այլև, ընդհանուր առմամբ, Աստվածաշունչը սովորեցնում է, որ ճշմարտապես փրկված անձը պտուղ է բերում, որը նրա փրկության վկայությունն է (Հակ. 2:17, 26): Հետևաբար ես և դուք պետք է մտնենք նեղ դռնով և ապրենք նեղ ճանապարհի համաձայն: Մենք փրկված ենք Հիսուսին հավատալով և հետևում ենք Նրա պատվիրաններին:

Մարդկանց մարտահրավեր նետելուց հետո Հիսուսը զգուշացրեց նրանց Իր ուսուցումներից տարբերվող ուսուցում սովորեցնողների մասին (Մատթ. 7:15): Շատերը պիտի գան Իր անունով, բայց նրանք գայլեր են, և նրանց միակ նպատակը Աստծո ժողովրդին ու Աստծո գործը կործանելն է (Ա Հովհ. 4:1): Աստվածաշունչը շատ նախազգուշացումներ ունի մեզ համար: Տարբեր եզրույթներ և օրինակներ կան Աստծո Խոսքում, որոնց միջոցով Աստված նախազգուշացնում է այդպիսի մարդկանց մասին՝ կեղծ եղբայրներ (Բ Կորնթ. 11:26), կեղծ առաքյալներ (Բ Կորնթ. 11:13), կեղծ ուսուցիչներ (Բ Պետ. 2:1):

Ինչպե՞ս ճանաչենք և զգուշանանք այդպիսի մարդկանցից: Կա միայն մեկ կերպ. ճշմարտությունը, Աստծո Խոսքը, Աստվածաշունչը ճանաչելով: Եթե ես և դուք իմանանք Աստվածաշունչը, կկարողանանք ստուգել մարդկանց պտուղները և իմանալ, թե արդյոք նրանք կե՞ղծ են, սո՞ւտ են, խաբո՞ղ են (Մատթ. 7:20):

Դժբախտաբար, կեղծ ուսուցիչների, առաքյալների և մարգարեների մեծ բանակ կա, և սրա պատճառն այն է, որ միշտ գտնվում են մարդիկ, ովքեր ոչ թե ճշմարտությունն են փնտրում, այլ իրենց ականջների համար հաճելի վարդապետությունը (Բ Տիմ. 4:3-4):

Հետևաբար մենք պետք է զգոն և աչալուրջ լինենք, քանի որ հակառակորդը ոչխարի հանդերձանքով մոտենում է, որպեսզի կործանի մեզ (Բ Կորնթ. 11:14): Մենք պետք է զգույշ լինենք նույնիսկ այն ժամանակ, երբ անձն ասում է. «Տե՛ր, Տե՛ր»: Գուցե նրանք օգտագործեն Հիսուսի անունը ու ասեն, թե փրկված են, բայց իրականում չապրեն Աստվածաշնչի համաձայն կյանք: Շատերը պնդում են, թե քրիստոնյա են, փրկված են, հավատում են Հիսուսին ու Աստ-

վաժաշնչին, բայց չեն ապրում քրիստոնեական կյանքը: Հիսուսը նախագգուշացնում է մեզ, որ զգույշ լինենք այդպիսի մարդկանցից ու նրանցից հեռու մնանք: Դժբախտաբար, այդպիսի մարդիկ մնում են եկեղեցիներում ճշմարիտ հավատացյալների կողքին՝ ձևացնելով, թե պատկանում են Աստծուն, բայց երբ դատաստանի օրը գա, Հիսուսը նրանց ասելու է. «Հեռու գնացե՛ք Ինձնից»: Որոմի առակում (Մատթ. 13:24-30) նրանք դատապարտության մատնվեցին:

Հիսուսն ավարտում է Իր ուսուցումը՝ ներկայացնելով երկու կառույց: Առաջին տան հիմքը հաստատուն ու անշարժ վեմ էր, որի վրա խելացի մարդը երկնքի ու երկրի Արարչի, մեծ Ճարտարապետի ուղեցույցի համաձայն կառուցեց իր տունը: Երբ անձը հետևում է Լեռան քարոզի ուսմունքին, ընդհանուր առմամբ՝ Աստվածաշնչի պատվերներին, ապա կառույցը հավիտենապես կանգուն է մնում: Երկրորդ տան հիմքը շատ մակերեսային ու անկայուն էր: Ով իր տունը այսպիսի հիմքի վրա է կառուցում, մնա է անխելք մարդու, քանի որ չի հետևում մեծ Ճարտարապետի ուղեցույցին: Եթե անձը չի հետևի Լեռան քարոզի ուսմունքին և առհասարակ՝ Աստվածաշնչին, ապա իր կառուցածը հավիտյան կանգուն չի մնա, այն կկործանվի:

Գիտակցենք, թե ոչ, շինարարներ ենք: Մենք մեր հոգևոր տաճարը կառուցում ենք այս երկու հիմքերից մեկի վրա. կա՞ն կառուցում ենք հաստատուն վեմի վրա, որը մեզ մինչև հավիտենական կյանքը հասցնող Հիսուս Քրիստոսն է, կա՞ն ավազի վրա՝ մեր անձնական արդարությանը ապավինելով, մարդածին վարդապետությանը հարելով, Աստվածաշնչի մասին սխալ պատկերացում ունենալով, որը կործանման ու դժոխք հասցնողն է: Ինչպիսի՞ շինարար եք դուք: Ո՞ր հիմքի վրա եք կառուցում ձեր հոգևոր տաճարը: Մենք պետք է վրստահ լինենք, որ իմաստուն մարդու պես ենք վարվում ու հավիտենական կյանքը ստանալու համար մեր տունը կառուցում ենք միակ հիմքի, հաստատուն վեմի՝ Հիսուս Քրիստոսի վրա:

Երբ Հիսուսը ավարտեց Իր ուսուցումը, մարդիկ զարմացան Նրա խոսքերի վրա, քանի որ իշխանությամբ էր սովորեցնում և ոչ թե այդ օրերի դպիրների ու փարիսեցիների պես: Գիտե՞՞ք՝ ինչու էր այդպես: Որովհետև՝

- Հիսուսը վստահ էր, որ ճշմարտությունն է սովորեցնում:
- Հիսուսն ապրում էր այն, ինչ սովորեցնում էր:
- Դպիրների ուսմունքը հիմնված էր ավանդույթների և այլ փիլիսոփայությունների վրա:
- Հիսուսը մարդածին սուտ փիլիսոփայություն չէր քարոզում, այլ Աստծո Խոսքը: Այդպես վարվեցին նաև առաքյալները (Կող. 2:8):

Բաֆֆի Չափարյան

Խաչ. ահա թե ինչ է պատրաստել մարդկությունը Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու համար: Խաչելությունը խայտառակ մահն էր: Հռոմեացիները կիրառում էին այդ մահապատիժը ամենամեծ հանցագործների համար, և մեր Տերը հոժարակամ ենթարկվեց դրան: Մոտավորապես երեք տարի Նա հայտնում էր Աստծո սիրտը և ճանապարհները: Բազմաթիվ տառապյալներ բժշկվեցին Նրա բարության և կարեկցության շնորհիվ: Եվ ահա հիմա կեղծ մեղադրանքի պատճառով Նա կանգնեց երկրային դատավորի առաջ: Նա չարտահայտեց որևէ խոսք՝ Ինքը իրեն պաշտպանելու համար: Ինչո՞ւ Նրա հանդեպ այդպիսի չար վերաբերմունք ցուցաբերվեց: Եվ ինչո՞ւ Նա չհակառակվեց:

Տերը բացեիքաց խոսում էր մարդու մեղավոր վիճակի և փրկության անհրաժեշտության մասին: Սա չափազանց շատ էր նրանց համար, ովքեր արդար էին սեփական աչքերում: Գալով այս աշխարհ՝ Իր կյանքը կորածների համար տալու, Նա ասում էր, որ եթե նրանք չապաշխարեն ու չհավատան, կմահանան իրենց մեղքերի մեջ: Սակայն նրանք չհնազանդվեցին և հնարավորություն գտան Նրանից ազատվելու:

Հիսուս Քրիստոսը «Ինքն իրեն խոնարհեցրեց, մահվանը հնազանդվեց, անգամ խաչի մահվան» (Փիլ. 2:8): Առանց Նրա փրկագնող մահի՝ չէր լինի փրկություն: Նա ոչնչացրեց մեղքը «Իր անձի պատարագումով» (Եբր. 9:26): Սակայն դա մարդուն չի ազատում իր մեղքերի պատասխանատվությունից: Մենք կարող ենք ստանալ Աստծո ներումը միայն այն դեպքում, երբ խոստովանենք մեր հանցանքը և հավատանք փրկության գործին, որը Հիսուս Քրիստոսը կատարեց խաչի վրա: Մարդիկ կարող են ծաղրել սա, սակայն նա, ով ներում ունի, կարող է վկայել, որ խաչի մասին խոսքն իսկապես «Աստծո գործությունն է»:

Շնորհով փրկված մեղավորներ (Հռոմեացիներին 3:21-31)

Վերջերս «Ջունգլի» կոչվող մի եվրոպական հեռուստահաղորդում էի դիտում: Այդ հաղորդման հիմնական նպատակն է բացահայտել և դատապարտել կաշառակերությունը: Իմ դիտած դրվագը կրոնի մասին էր. ներկա էին քրիստոնեական երեք գլխավոր խմբերի ներկայացուցիչներ, կոմունիստներ ու քաղաքագետներ: Շուրջ երկու ժամ հունական ուղղափառ, կաթոլիկ և բողոքական եկեղեցիների կրոնական առաջնորդները բանավիճում էին՝ մեղադրելով ու քննադատելով միմյանց:

Հաղորդավարը խոսքն ուղղեց մի կոմունիստ աթեիստի: Նա ժըպտաց ու հեզմանքով պատասխանեց. «Դե՛, ի՞նչ կարող եմ ասել: Նայե՛ք նրանց, նրանք հավակնում են լինել քրիստոնյա, բայց իրար կոկորդ են կրծում ու միմյանց աչքեր են հանում»:

Մինչ այդ մարդիկ փորձում էին ապացուցել, որ իրենք ճիշտ են, իսկ մյուսները՝ սխալ, հեռուստադիտողները հավանաբար մտածում էին, թե Հիսուս Քրիստոսը արդյոք կարո՞ղ է փոխել մարդու սիրտը:

Սա հազվադեպ իրավիճակ չէ: Մինչ մեր եկեղեցու առաջնորդները զբաղված են մարդկանց մեղքերը չափելով (տեսնելու համար, թե ով է ավելի մեծ ու ավելի ահավոր մեղքեր գործում) և նրանց «վատ մեղավորներ» պիտակելով, կորած մարդիկ գնում են դեպի հավիտենական մահ, որտեղ Քրիստոսը չկա:

Իհարկե, «վատ մեղք» կամ «վատ մեղավոր» արտահայտություններն անիմաստ են: Իսկ մի՞թե կան «լավ մեղքեր» կամ «լավ մեղավորներ»: Իհարկե ոչ: Մեղքը մեղք է, և ցանկացած խախտում ու հանցանք այնքան վատն է, որ մեզ հավիտյան հեռացնում է սուրբ ու արդար Աստծուց (Հռոմ. 3:23):

«Մենք ամենքս էլ պիղծ բանի պես ենք դարձել, մեր բոլոր արդար գործերը կեղտոտ լաթերի նման են» (Ես. 64:6):

Բոլորս էլ Աստծո փրկարար շնորհի կարիքն ունենք: Տարբերություն չկա, թե որքան մեղք ենք գործել, կամ ինչ կարծիք ունեն մեր մասին ուրիշները: Աստված գիտի մեր սրտերն ու կյանքերը:

«Դավաճանությունն ու սպանությունը սարսափելի մեղքեր են», - ասում են մարդիկ: Այո՛, բայց բամբասելն ու դատելը նույնպես սարսափելի են: Եթե չենք ընդունում մեր մեղքը, մենք էլ ուրիշների նման հանցավոր ենք դառնում՝ անկախ նրանից, թե որքան լավ տալավորություն ենք թողնում:

Սիրելի՛ ընթերցող, եթե վստահ չես, որ Քրիստոսի մարմնի մեջ ես, և կասկածում ես քո փրկության հարցում, ապա ընդունի՛ր և վրստահի՛ր Քրիստոս Փրկչին, ով խաչվեց քո մեղքերի համար: Դու կարող ես Հիսուս Քրիստոսին հավատալով լիարժեք ներում և ազատագրում ստանալ:

Չկան «լավ մեղավորներ»: Մեղքը մեղք է, և այն մեզ հեռացնում է Աստծուց: Թե՛ քո փոքր մեղքերը, թե՛ քո եղբայրների «մեծ ու վատ» մեղքերը նույնն են: Բոլորս էլ վատ մեղավորներ ենք, բայց Քրիստոսին հավատալով՝ կարող ենք արդարանալ:

Պարզապես հիշենք, որ մեզ շրջապատող աշխարհը ուշադիր նայում է, որ տեսնի, թե արդյոք Հիսուս Քրիստոսի Ավետարանը որևէ փոփոխություն առաջացրե՞լ է մեր կյանքում: Արդյոք Քրիստոսը քո առօրյա կյանքում փոփոխություն առաջացրե՞լ է: Արդյոք քո բոլոր՝ թե՛ մեծ, թե՛ փոքր մեղքերը խոստովանե՞լ ես Աստծուն ու նրանից ներում խնդրել:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան



Թիթեռնիկի առակը

Մինչ թիթեռնիկը սավառնում էր կապույտ երկնականաբույս, մի թրթուր իր ընկերոջն ասաց. «Դու այլևս այսպիսին չես տեսնելու ինձ»:

Ժամանակը գալիս է, երբ յուրաքանչյուր թրթուր բնագոյաբար դադարում է ուտելուց և մեծանալուց՝ սկսելով իր շուրջ փափուկ պատյան հյուսել: Երբ պատյանը կարծրանում է, թվում է, թե թրթուրը մահացել է:

Բայց զարնանային մի առավոտ պատյանի մեջինը սկսում է գալարվել, գագաթը ծածկվում է, և դուրս է գալիս գեղեցիկ թիթեռ: Նա ժամերով բացում է թևերը, կամաց-կամաց վերուվար շարժում: Եվ ահա առանց ջանք թափելու՝ օդի ալիքների հետ թիթեռը թռչում է մի ծաղկից մյուսին, կարծես ուզում է ցույց տալ իր վառ գունագարդ թևերը:

Թիթեռնիկի հրաշքը երբեք չի դադարում մեզ սքանչացնելուց, քանի որ այն հարության խոստման մի կենդանի պատկեր է:

Չատկի տոնի առավոտյան առաքյալները տեսան Հիսուսի թաղման կտորները, որոնց մեջ մարմինը չկար, ճիշտ այդ պատյանի պես, որտեղից թիթեռը թևեր առած սավառնում էր: «Այստեղ չէ Նա, քանի որ հարություն առավ», - ասաց հրեշտակը զարհուրած առաքյալներին: Դրանից հետո հարուցյալ Փրկիչը երևաց աշակերտների և 500-ից ավելի մարդկանց ցույց տվեց, որ Ինքը կենդանի է:

Մի քանի շաբաթ առաջ բարեկամուհիս մահացավ: Մի կին, որ կյանքով լի էր, հիմա անշարժ էր: Մինչ նայում էի դիակին, մտածում էի իմ՝ նույնպես մահկանացու լինելու մասին: Մի օր ես էլ նրա պես կարող եմ տանջվել ու մահանալ:

Մահվան մասին շատ խորհուրդներ կան, սակայն երկու բան հրստակ է. նախ՝ մահը մի թշնամի է, երկրորդ՝ Հիսուսի՝ գերեզմանից հարություն առնելն Աստծո ապացույցն է մեզ այն մասին, որ մահը վերջակետ չէ: Դատարկ գերեզմանը և Հիսուսի հոգին, որ մեր մեջ

է, վկայում են այն մասին, որ հարության առավոտը մահվան վրա Աստծո ունեցած հաղթանակի օրն է:

Ուստի Չատկվա առավոտյան հավատացյալ քրիստոնյաները հավաքվում են՝ տոնելու Հիսուսի՝ մահվան վրա տարած հաղթանակը: Քանի որ Հիսուսը մեր Տերն ու Փրկիչն է, ուրեմն Նրա հաղթանակը նաև մերն է: Նրա հարությամբ մենք էլ ապրելու ենք հավիտյանս հավիտենից:

Ուստի տոնենք Սուրբ Չատիկը և տեսնենք այն թիթեռնիկին, որ շուշանների մեջ բռնում է՝ ավետելով. «Քրիստոս հարյավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Քաղվածք՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից



Կողոսացիներին 3:18-25

18. Կանա՛յք, հնազանդ եղեք ձեր ամուսիններին, ինչպես վայել է Տիրոջով:

19. Այրեր՛, սիրեցեք ձեր կանանց և նրանց հանդեպ դառը մի՛ եղեք:

20. Որդիներ՛, ամեն բանի մեջ հնազանդ եղեք ձեր ծնողներին, որովհետև դա է հաճելի Տիրոջ առջև:

21. Հայրեր՛, մի՛ գրգռեք ձեր զավակներին, որ չվհատվեն:

22. Ծառաներ՛, ամեն բանի մեջ հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ոչ թե առերես ծառայելով՝ մարդահաճոճների պես, այլ՝ սրտի անկեղծությամբ և Աստծուց վախենալով:

23. Եվ ինչ որ անեք, սրտա՛նց արեք, որպես թե Տիրոջ համար և ոչ թե՝ մարդկանց.

24. իմանալով, որ Ժառանգության հատուցումը Տիրոջից եք ստանալու, ուրովհետև Տեր Քրիստոսին եք ծառայում:

25. Եվ ով սխալ է գործում, իր սխալի հատուցումը պիտի ստանա. աշառություն չկա:

**«Բացում ես ձեռքդ, ու լիացնում ես
ամեն մի կենդանի էակի (մարդու)
փափագը» (Սաղմոս 145:16)**

Աստծո ձեռքը միշտ բաց է: Նա առատորեն տալիս է Իրենից խնդրողներին:

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ունենք Գոհաբանության և Ծննդյան տոները: Տարվա այն եղանակն է, երբ մարդիկ իրար նվերներ են տալիս և ստանում: Մեծագույն տվողն Աստված է, որ Իր ձեռքը բացում է ու լցնում բոլորի փափագը:

Աստված ամեն օրհնության ակն ու աղբյուրն է: Նրանից ենք ստանում նյութական և հոգեկան բոլոր օրհնությունները: Մատթ. 5:45-ում կարդում ենք, որ Նա իր արևը ծագեցնում է թե՛ չարերի, թե՛ բարիների վրա: Ուստի Աստված է քեզ տվել այն, ինչ որ ունես:

Աստծո ձեռքը միշտ բաց է՝ մեզ Իր մոտ հրավիրելու: Իր ձեռքը մեկնած՝ յուրաքանչյուր անձի Նա ասում է. «Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և Ես ձեզ հանգստություն կտամ» (Մատթ. 11:28): Իր զավակներին հրավիրում է՝ մոտենալու Իր շնորհաց աթոռին՝ ողորմություն ընդունելու (Եբր. 4:16):

Աստված ձեռքը մեկնում է՝ մեզ բռնելու, վերցնելու, մեղաց տիղմից դուրս հանելու և մեր բոլոր նեղություններից մեզ ազատելու: Նա խոստացել է Իր արդարության աջով բռնել մեզ (Սաղ. 40:2, Եսայի 41:10):

Ուստի գիտակցաբար փառք տանք Աստծուն, որ Իր ձեռքը բաց է՝ ամեն շնչավոր մարդ արարածի փափագը լցնելու հոգևոր և նյութական օրհնություններով: Եթե Աստված խոստացել է մեր փափագները լցնել, եկե՛ք մտածենք, թե մենք որքանո՞վ ենք իրագործում Նրա փափագները:

Վեր.՝ Հապիպ Ալաճաճի

Քաղված՝ «Հոգևոր խորհրդածությունների կաթիլներ» գրքից

Տիղմ, վեն, աղաղակ, երգ (Կարդացե՛ք Սաղմոս 40-ը)

Այս սաղմոսում շատ հստակ է, որ Դավիթը մենձ դժվարության մեջ էր հայտնվել. թե ինչպիսի դժվարություն էր, չգիտենք: Գուցե դժվարությունը մարդիկ էին, ովքեր չարիք էին ցանկանում նրան, ինչը տեսնում ենք սաղմոսի վերջին համարներում: Գուցե դժվարությունը նրա անօրենություններն էին (հմր. 12): Չգիտենք, բայց Դավիթի ընտրած խոսքերը, արտահայտած ապրումները, աղերսանքը ցույց են տալիս, որ նա իսկապես խիստ օգնության կարիք ուներ...

Երբևէ հայտնվե՞լ եք մման իրավիճակում: Երբևէ ասե՞լ եք Աստծուն. «Տե՛ր, եթե չհասնես օգնության, ես կկորչեմ, եթե հիմա չօգնես ինձ, հետո ուշ կլինի»: Դավիթն օգնություն էր խնդրում Աստծուց ու աղերսում էր, որ Նա անմիջապես միջամտի.

«Ինձ ազատե՛լ կամեցիր, Տե՛ր, ինձ օգնության շտապիր, Տե՛ր» (40:13):

«Դո՛ւ ես, մի՛ ուշանա, ո՛վ իմ Աստված» (40:17):

Այս երկու համարները կարծես թե հակասում են Դավթի՝ առաջին համարում արտահայտած խոսքին: Այնտեղ տեսնում ենք հանդարտ, համբերող, խաղաղ, հեզ, լուռ Դավթին, ով սպասում է Տիրոջը, իսկ այս համարներում՝ վառվռուն, անհամբեր, հենց հիմա ուզող Դավթին...

Միայլ չէ Աստծո անմիջական օգնությունը խնդրելը. «Ո՛վ Տե՛ր, շտապիր ինձ օգնելու, ինձ հասիր...»: Այսպես աղոթելը քիչ հոգևորության նշան չէ: Ընդհակառակը, եթե այն մոտեցումով չես աղոթում, եթե այն ակնկալիքով չես աղոթում, որ Տերը կարող է անմիջապես օգնել, հենց դա է հոգևորության պակասի նշանը:

Պետրոսը, երբ խեղդվում էր, աղոթեց. «Տե՛ր, ազատիր ինձ»: Կպատկերացնեի՞ք՝ եթե այդ մոտեցումով չաղոթեր, ինչ կլիներ: Սակայն ուրիշ իրավիճակում, երբ Պետրոսը դարձյալ մահվան վտանգի ա-

ռաջ էր, բանտարկված Հերովդեսի կողմից ու պետք է Հակոբոսի նման սպանվեր, սպասելով սպասում էր Տիրոջը, չէր ասում՝ հենց հիմա ազատիր: Այդպես անողը հանգիստ խորունկ քունի չէր մտնի: Վստահ եմ, որ աղոթում էր, որ Տերն իրեն ազատի Հերովդեսի ձեռքից:

Վերադառնա՞նք մեր սաղմոսին: Պատկերը նման է խորունկ փոսի, ահռելի գուրբի, կորստյան փոսի, խավարի, տղմալից կավի, երբ փրկվելու հույս չկա: Այդպիսի վիճակում մարդը գիտակցում է, որ մի քանի օրվա կամ նույնիսկ մի քանի ժամվա կյանք է իրեն մնացել, եթե օգնություն չհասնի:

Վերջերս լուրերից կարդացի, որ Արմավիր քաղաքում մի քաղաքացի 20 մետր խորություն ունեցող ջրհորի մեջ է ընկել, և անհրաժեշտ էր փրկարարների օգնությունը: Սարսափելի փորձառություն է: Սակայն ավելի սարսափելի է, եթե այն դիտարկենք որպես հոգևոր փորձառություն: Եթե այդ մարդուն խնդրեինք նկարագրել սեփական զգացումները, որն ունեցավ ջրհորի հատակին, հաստատ սրտաճնիկ խոսքեր կլսեինք:

Հին Կտակարանում մի մարգարե կար, որ Արմավիրի մեր հայրենակցի նման կարող էր նկարագրել, թե ինչ է նշանակում լինել փոսի մեջ, քանի որ վերապրել էր այդ փորձառությունը: Խոսքը Երեմիայի մասին է. «Ապա Երեմիային վերցրին և թագավորի որդի Սեդքիայի գուրբի մեջ նետեցին, որ բանտի գավթում էր. Երեմիային պարանետրով ցած իջեցրին: Իսկ գուրբի մեջ ջուր չկար, այլ տիղմ էր. և Երեմիան տիղմի մեջ ընկղմվեց» (Երեմ. 38:6):

Երեմիան մարգարեացել էր, որ քաղաքում մնացողները սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնեն, իսկ քաղդեացիներին զնացողները ողջ պիտի մնան: Իշխաններից ոմանց դուր չեկավ այս մարգարեությունը, ու Սեդեկիա թագավորին բողոքեցին, նա էլ հրաման տրվեց, որ Երեմիային գուրբը նետեն: Սակայն Երեմիա 38:7-ում կարդում ենք մի անձնավորության մասին, ով լսեց սա՝ Աբդեմեկեքը... Նա բարեխոսեց Սեդեկիա թագավորին և ազատեց Երեմիային տղմալից գուրբից (Երեմիա 38:9, 10):

Դավթի պարագայում Աբդեմեկեք չկար, չկար մեկը, որ լսեր Դավթի մասին, չկար մեկը, որ հասկանար՝ ինչ վիճակով է անցնում նա, որ

նրա համար բարեխոսեր թագավորին, ու վերջինս ազատ-
ման հրաման տար:

Չի՞ եղել, որ շուրջդ նայես ու փնտրես Արդեմեւելքներ,
բայց չգտնես, չլինի հասկացող, չլինի զգացող, չլինի կա-
րեկցող... փնտրես մեկին, բայց չգտնես:

Իրականում մինչ Երեմիան (Տիրոջ մարգարեն, զավակը)
գուրի մեջ էր ու կարծես լքված բոլորի կողմից, Աստված
վերևում Արդեմեւելքին լսել է տալիս նրա պատմությունը ու
փափագ դնում՝ նրան օգնելու: Նա փոխում է Սեղեկիայի
սիրտը....

Երբ անցնում ենք կյանքի նման վիճակներով և մտա-
ծում ենք, թե միայնակ ենք, տղմալից փոսի մեջ..., Աստ-
ված գործում է...: Աստված առանց Արդեմեւելքների էլ գոր-
ծում է: Պատմության շարունակությունից տեսնում ենք, որ
Երեմիան փրկվում է ստույգ մահից:

Տիղմ ու վեմ, աղաղակ ու երգ, իրար հակասող բառեր:
Տիղմը անհաստատ հողն է, որի վրա չես կարող կանգնել,
վեմը ամուր գետինն է, որի վրա ոչ միայն հաստատուն
կանգնում ես, այլև վստահ քայլերով առաջ ես գնում: Հա-
մարն ասում է. «Տերը «քայլվածքս հաստատում է» ամուր
գետնի վրա և նույն տեղում չեմ մնում, գնում եմ առաջ»:
Տիղմը մարդկային խոստումներն են, մարդկային կարողու-
թյունները, հարստությունը, որը վստահելի չէ:

Ուստի դժվարության պահին շտապ դիմե՛ք Տիրոջը: Թող
Աստված լսի ձեր աղոթքները, և եթե նման փորձառության
մեջ եք, քաջալերվե՛ք այս սաղմոսով ու ձեր հույսը Տի՛րոջ
վրա դրեք. Նա ձեր տիղմը կփոխարինի վեմով, երգով ու
գովությունով:

Վարդան Սարգիսյան